

Proposed Project Briefs/Առաջարկվող նախագծի համառոտագիր

| Project Name/Նախագծի անվանումը | Brief Description/Համառոտ նկարագրությունը | Timeline and Priority/Ժամանակացույցը և առաջնահերթությունը | Materials, Costs (if known)/Նյութեր, արժեքը (եթե հայտնի է) |
|---|---|---|--|
| <p>1. Նոր Աղբավայրի կառուցում: Աղբահավաք համայնքում /New place for collecting rubbish, rubbish collecting</p> | <p>Սկսած 2000 թվականից գյուղապետարանի անմիջական հսկողությամբ և միջոցներով համայնքում կատարվում է աղբահանություն: Այժմյան աղբավայրը գտնվում է անհարմար տեղում, չի համապատասխանում աղբավայրի համար պահանջվող պայմաններին: Անհրաժեշտ է կառուցել նոր աղբավայր, որը կլինի ցանկապատված, անասունների համար փակ: Նախատեսվում է նաև նոր աղբավայր տանող ճանապարհի բարեկարգում: Մաքուր պահել գյուղն ու դրան հարակից տարածքը: Անհրաժեշտության դեպքում կազմակերպել աղբահավաք: / Since 2000, the village administrative office controlled and carried out the waste in the community. The current garbage dump is in an awkward spot and does not meet the conditions required for the garbage dump. It is necessary to build a new garbage dump, which will be fenced protected from cattle. There is also a plan to improve the road leading to the garbage dump. Keep clean the village and surrounding areas. If necessary organize rubbish collecting.</p> | <p>2ամիս/2 month</p> <p>Աղբահավաքն ամիսը մեկ անգամ, կամ ըստ անհրաժեշտության/Collecting rubbish once a month or when necessary</p> | <p>3մլն ՀՀ դրամ/AMD 3,000,000</p> <p>Կարող է իրականացվել գյուղացիների կամ դպրոցականների միջոցով շաբաթ օրերին:/Can be done by villagers or school children on Saturdays</p> |
| <p>2. Եկեղեցի տանող ճանապարհի բարեկարգում/Improve ment of the road leading to church</p> | <p>Համայնքում առկա է գործող եկեղեցի՝ սուրբ Մարիամ Աստվածածին, կառուցված 1321թվականին, որի ճանապարհը գտնվում է անբարեկարգ վիճակում: Եկեղեցու հարակից տարածքում է գտնվում նաև գյուղի միակ գերեզմանոցը և հնագույն խաչքարերը: այցելում են բազմաթիվ տուրիստներ, սակայն անբարեկարգ ճանապարհը ստեղծում է բազմաթիվ խոչընդոտներ:</p> | <p>1ամիս/1 month</p> | <p>3մլն ՀՀ դրամ/AMD 3,000,000</p> |

| | | | |
|--|---|-----------------------|---|
| | <p>Նախատեսվում է բարեկարգել եկեղեցի և գերեզմանոց տանող ճանապարհի 500մետր հատվածը:/ There is an operating church in the community, St. Mary's church, built in 1321, but the road leading to it is in poor condition. The church is located in the area near the village cemetery and the ancient khachqars, visited by many tourists, but poor road creates many obstacles. It is intended to improve 500 meters section of the road leading to the church and cemetery.</p> | | |
| <p>3. Եկեղեցու և գերեզմանոցի տարածքում խողովակաշարի անցկացում/Installing pipeline in the area of church and cemetery</p> | <p>Մուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին և գերեզմանոցը գտնվում են բարձրադիր դիրքում, որտեղ բացակայում է ինչպես խմելու, այնպես է ոռոգման ջուրը: Ջրի առակայության դեպքում հնարավորություն կստեղծվի կանաչապատել ինչպես եկեղեցու շրջակայքը, այնպես էլ ամբողջ գերեզմանոցի տարածքը: Ջրի առկայությունը (հատկապես ամռան շոգ ամիսներին) կնպաստի նաև զբոսաշրջության զարգացմանը:/ St. Mary's Church and cemetery are located in a high position, where there is no drinking water, as well irrigation. With water presence it would be an opportunity to plant the surrounding area of the church, as well the cemetery area. Water availability (especially during hot summer months) will also contribute to tourism development.</p> | <p>1 ամիս/1 month</p> | <p>1000 մետր մետաղապլաստե խողովակ Ընդհանուր արժեքը՝ 1 մլն ՀՀ դրամ/AMD 1,000,000</p> |
| <p>4. Արենի համայնքի մուտքի բարեկարգում/Improve ment of the area near entrance to Areni</p> | <p>Համայնքի մուտքի մոտ գյուղապետարանի կողմից տեղադրվել է խորհրդանշական գինու տակառ, որի հարակից տարածքը բարեկարգման կարիք ունի: Նախատեսվում է կանաչապատել տակառի հարակից մոտ 100քմ տարածքը, ապահովել խմելու ջրով և ցանկապատել նշված տարածքը:/ Near the community entrance was placed a symbolic cask of wine by village administrative office. The surrounding area in need of improvement. It is planned to landscape about</p> | <p>1 ամիս/1 month</p> | <p>800 հազար ՀՀ դրամ/AMD 800,000</p> |

| | | | |
|--|--|-----------------|--|
| | 100 square meters of area next to barrel, providing drinking water and to fence the area. | | |
| 5. Ծրագիր այգեգործության համար դիվերսիֆիկացնելու մշակաբույսերի տեսակները:/Program for horticulture to diversify types of crops | Նոր Զելանդիայի ներկայացուցիչ-մասնագետները կարող են գալ համայնք կիսվելու իրենց փորձով, հատկապես հատապտուղների, խաղողի մշակման հարցում: Ինչպես նաև ծանոթանալ տեղի գինեգործների փորձին:/ New Zealand's specialists can come to share their experience with the community, especially the cultivation of berries and grapes. Also learn about the wine experience | 1 ամիս/1 month | Մասնագետներ տարբեր բնագավառներում: Բնակավայրը կտրամադրվի գյուղացիների կողմից:/Specialists in different areas. The accommodation can be provided by villagers. |
| 6. Լեզվի դասընթացներ/ Language courses | Արենիի համայնքում կան գործող B&B-ներ, որոնք գիշերակացի, սննդի ծառայություններ են առաջարկում զբոսաշրջիկներին: Ինչպես նաև համայնքում կան բնակիչներ, ովքեր կարող են կազմակերպել տուրեր տարածաշրջանում, սակայն լեզու չիմանալու պատճառով դա չի իրականացվում: Այս տեսանկյունից անհրաժեշտություն կա կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ վերոնշյալ թիրախային խմբերի համար:/There are B&Bs in Areni community, which offer accommodation and food services to tourists. As well, there are community residents who can organize tours in the region, but it is not implemented because of lack of the language knowledge. From this perspective, there is a need to organize the target groups for English language courses. | 6 ամիս/6 months | Դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ են գրքեր, նյութեր ինչպես նաև գրենական պիտույքներ, որոնց արժեքը կկազմի մոտավորապես 50,000 դրամ կամ գրքեր անգլերեն լեզվի սկսնակների համար: Անգլերեն լեզվի մասնագետ գյուղում կա, ով կարող է անցկացնել դասընթացները (ներկա պահին նա աշխատում է Արենիի գինու գործարանում որպես գիդ):/ For organising the trainings there is a need for books, materials, as well as stationery items, which will cost approximately 50,000 dram or English language books for |

| | | | |
|---|--|--|---|
| | | | beginners. There is an English language specialist in the village who can teach (for now she works in Areni Wine factory as a guide). |
| 7. Տեսարժան վայրեր տանող ցուցանակի տեղադրում գլխավոր ճանապարհին/Sign on the main road showing the overall directions to sights. | Անհրաժեշտություն կա դեպի Նրավանք, Արենի-1 քարանձավ, սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, գերեզմանոց, Սյունյաց Օրբելյանների պալատ, 13-րդ դարում եպիսկոպոս Սարգսի կողմից կառուցած կամուրջ և այլ տեսարժան վայրեր տանող ուղղությունները ցուց տվող ցուցանակ տեղադրել գլխավոր ճանապարհին:/ Put up sign on the main road showing the overall directions to sights – Noravank, Areni-1, St. Mary's Church, cemetery, Orbelian of Syunik's palace, 13th-century bridge built by Bishop Sarkis, etc. | | Ցուցանակ: Արժեքը ճշտվում է:/Sign. The price is being determined. |
| 8. Ցուցանակ քարտեզով գերեզմանոցի և հին Արենիի վերաբերյալ/Sign with the map about cemetery and old Areni | Տեղադրել ցուցանակ քարտեզով, որը ցույց կտա գերեզմանոցի և Հին Արենիի կառույցները, դրանց տեղը, ինչպես նաև նշել հին գերեզմանաքարերի տեղերը, ովքեր են թաղված այնտեղ, եթե հայտնի է, որը հետաքրքիր կլինի այցելուների համար:/To put up a sign with the map of cemetery and old Areni, showing historical places of the buildings, as well the old graveyards with the names who is buried there, if known. It would be interesting for visitors. | | Ցուցանակ: Քարտեզը կկազմվի գյուղապետարանի կողմից համապատասխան մասնագետների օգնությամբ:/Sign. The map will be done by village administrative office with the help of specialists. |
| 9. Ցուցանակներ վեպում նշված գյուղի տարբեր պատմական | Զբոսաշրջիկների, ինչպես նաև պատմական կառույցների պահպանման համար տեղադրել ցուցանակներ վեպում նշված գյուղի տարբեր | | Ցուցանակներ: Արժեքը ճշտվում է:/Signs Sign. The |

| | | | |
|---|--|--|---|
| <p>կառույցների համար:/Historical signs for village sites that appear in the novel</p> | <p>պատմական կառույցների վերաբերյալ՝ գյուղխորհրդի շենքի, դպրոցի, հին երկաթե կամրջի և այլ պատմական կառույցների:/ Put up historical signs for village sites that appear in the novel intended not just for tourists but also to encourage preservation of historical buildings – Village administrative Office, School, old iron bridge, or any other historical building.</p> | | <p>price is being determined.</p> |
| <p>10. Նոր Ջեյլանդիայի վերաբերյալ ուսումնական նյութեր դպրոցի համար:/Educational materials for the school related to New Zealand</p> | <p>Կարելի է անցկացնել աշխարհագրության դասընթացներին՝ ծանոթացնելով երեխաներին Նոր Ջեյլանդիայի աշխարհագրական դիրքին, բնությանը, կենդանական աշխարհին: Ինչպես նաև ֆիզկուլտուրայի ժամերին կարելի է սովորեցնել նեթբոլ և ռեգբի, ևս մեկ կապ հաստատելով Հայաստանի և Նոր Ջեյլանդիայի միջև սպորտի միջոցով:/ It can be done during geography lessons՝ introducing children to New Zealand's geography, flora and fauna. As well as during physical education lessons can teach skills for netball and rugby, making a link between Armenia and New Zealand through sport</p> | | <p>Էկրան, տեսանյութեր, գրքեր, սպորտային սարքավորումներ նեթբոլի և ռեգբիի համար: Նեթբոլի և ռեգբիի մարզիչներ: Բնակավայրը կտրամադրվի գյուղացիների կողմից:/Monitors for video, videos, books, sports equipment for netball and rugby. Coaches for netball and rugby. The accommodation can be provided by villagers. NZ Rugby might contact World Rugby to bring equipment and raise interest in the game in the Caucasus, especially with Georgia now prominent in rugby.</p> |